ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 49/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ԳԲԽ-49/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի 11.04.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-49/17 բողոք) և կից փաստաթղթերը, «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), պարզեց հետևյալը.

1. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ հայտ է ներկայացրել Արմավիրի մարզպետարանի կողմից հայտարարված «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին: Սակայն հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ տուժանքի մասին համաձայնագրի հավելված 9-ում բացակայում էր գլխավոր հաշվապահի ստորագրությունը և ընկերության տնօրենի անձնագրային տվյալները:

Ընկերությունը գտնում է, որ «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, այսինքն՝ Արմավիրի մարզպետարանը, կատարել է սխալ՝ մերժելով «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հայտը, ինչի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի հ.168-Ն որոշման մի շարք դրույթներ:

Ընկերությունը մեջբերել է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն, դիմելով գնումների բողոքարկման խորհրդին, խնդրում է՝ դադարեցնել «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Արմավիրի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրեն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) 11.04.2017թ.-ին թիվ 02/04.1/1445-17 Պատվիրատուին ուղղված գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ Պատվիրատուն 18.04.2017թ-ի թիվ 01/04/1419-17 գրությամբ՝ Կենտրոնին է ներկայացրել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից համակարգ մուտքագրված փաստաթղթերի պատճենները և հանձնաժողովի արձանագրությունը, ինչպես նաև տեղեկացրել, որ հանձնաժողովի որոշումը կայացվել է՝ հիմք ընդունելով հրավերի 7.2.1 կետի պահանջը, ՀՀ ֆինանսների նախարարի 28 փետրվարի 2017թ. թիվ 72-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի «Տուժանքի մասին համաձայնագրում» լրացման ենթակա տողերի բացակայությունը՝ ***ամսաթիվ, անձնագրային տվյալներ, հաշվապահի ստորագրություն:***

3. ԳԲԽ-49/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-49/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված Նոր Արմավիր համայնքի նախակրթարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին 03.31.2017թ-ին հայտ է ներկայացրել նաև «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն:

2. «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.04.2017թ. թիվ 1 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ տուժանքի մասին համաձայնագրի հավելված 9-ում բացակայում էր գլխավոր հաշվապահի ***ստորագրությունը և ընկերության տնօրենի անձնագրային տվյալները:***

3. Պատվիրատուն 18.04.2017թ-ի թիվ 01/04/1419-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացրած հավելված 9-ում «Տուժանքի մասին համաձայնագրում» բացակայում է հրավերի օրինակելի ձևում լրացման ենթակա տողերը, այն է՝ ***ամսաթիվ, անձնագրային տվյալներ և հաշվապահի ստորագրություն:***

4. Ընկերությունը՝ գնումների բողոքարկման խորհրդի 14.04.2017թ-ին կայացած նիստի ժամանակ ներկայացրել է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի 11.04.2017թ-ի թիվ 443 տեղեկանքը համաձայն որի՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում Լուսի-Արեգ ՍՊԸ /ՀՎՀՀ 7108805672/-ի ստորագրության նմուշի և կլոր կնիքի դրոշմի քարտում ներառված է միայն տնօրեն՝ Մարտիրոսյան Համլետ Ռաֆիկի /անձ. AH0457650, տրված է 05.12.2007թ.-ին 031-ի կողմից/ ստորագրությունը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 28 փետրվարի 2017թ. թիվ 72-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի համաձայն «Տուժանքի մասին համաձայնագրում» լրացման ենթակա պարտադիր տողեր են համարվում՝ ***ամսաթիվը, անձնագրային տվյալները, հաշվապահի ստորագրությունը:***

Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված Նոր Արմավիր համայնքի նախակրթարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված «ԱՄ

ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին 03.31.2017թ-ին հայտ է ներկայացրել նաև «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն:

«ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.04.2017թ. թիվ 1 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ տուժանքի մասին համաձայնագրի հավելված 9-ում բացակայում էր գլխավոր հաշվապահի ստորագրությունը և ընկերության տնօրենի անձնագրային տվյալները:

Պատվիրատուն 18.04.2017թ-ի թիվ 01/04/1419-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացրած հավելված 9-ում «Տուժանքի մասին համաձայնագրում» բացակայում է հրավերի օրինակելի ձևով լրացման ենթակա տողերը, այն է՝ ***ամսաթիվ, անձնագրային տվյալներ և հաշվապահի ստորագրություն:***

Ընկերությունը՝ գնումների բողոքարկման խորհրդի 14.04.2017թ-ին կայացած նիստի ժամանակ ներկայացրել է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի 11.04.2017թ-ի թիվ 443 տեղեկանքը համաձայն որի՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում Լուսի-Արեգ ՍՊԸ /ՀՎՀՀ 7108805672/-ի ստորագրության նմուշի և կլոր կնիքի դրոշմի քարտում ներառված է միայն տնօրեն՝ Մարտիրոսյան Համլետ Ռաֆիկի /անձ. AH0457650, տրված է 05.12.2007թ.-ին 031-ի կողմից/ ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության հաշվապահական հաշվառումը վարել է Ընկերության ղեկավարը, ուստի Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 9 հավելվածը հաստատված է եղել միայն Ընկերության տնօրենի ստորագրությամբ (հիմք՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի 11.04.2017թ-ի թիվ 443 տեղեկանք):Բայց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տուժանքի մեջ բացակայում է նաև ***ամսաթիվը և անձնագրային տվյալները***, ինչը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 28 փետրվարի 2017թ. թիվ 72-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի «Տուժանքի մասին համաձայնագրում» լրացման ենթակա պարտադիր տողեր են համարվում:

Ուստի նման փաստական հանգամանքների պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացրած «Տուժանքի մասին համաձայնագիր» հավելված 9-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին և Պատվիրատուն մերժելով Ընկերության հայտը չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՄ ԲԸՀԱՇՁԲ-17/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Սյունե Բաղալյան**